

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2018 թվականի  
նոյեմբերի 22-ին կայացած նիստի

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 38 անդամներից 31-ը (ցուցակը կցվում է)

Նախքան խորհրդի նիստի բացումը Խորհրդի նախագահ Մ.Ա.Գրիգորյանը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

**Օրակարգ**

1. 2017/2018 ուստարվա ուսումնական առաջադիմությունը և առկա խնդիրները

/զեկ. փոխդեկան Վ.Պ.Վարդանյան/

2. «Մերվիսի» ամբիոնի վարիչի հաշվետվությունը ամբիոնում կատարած աշխատանքների վերաբերյալ

/զեկ. ամբ. վարիչ Գ.Փ.Ալեքսանյան/

3. Առկա և հեռակա ուսուցման ասպիրանտների ատեստավորում

/զեկ. ամբիոնի վարիչներ/

4. Մրցույթ

5. Ընթացիկ հարցեր

1. **ԼՄԵՑԻՆ** Փոխդեկան Վ.Վարդանյանի հաղորդումը 2018/2019 ուս. տարվա առաջադիմության վերաբերյալ: Նա նշեց, որ ավարտված են բոլոր լուծարքային շրջանները և մանրամասնորեն ներկայացրեց դուրս մնացած ուսանողների քանակն ըստ մասնագիտությունների և կուրսերի: Հաղորդման ընթացքում Վ.Վարդանյանը ներկայացրեց նաև մինչև 12 կրեդիտ պարտք ունեցող ուսանողների քանակը: Նշված առարկայական պարտքերը հանձնելու նպատակով ստեղծվել են առարկայական հանձնաժողովներ, որտեղ ընդգրկված են առարկան դասավանդող դասախոսը, ամբիոնի վարիչը և դեկան կամ դեկանի տեղակալներ:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ռ.Ս.Մովսեսյանը** նշեց բացակաների ուղիղ կապը հաճախելիության համար հատկացված 2 կրեդիտները հանելու հետ: Ի պատասխան նոր մեթոդիկա

մշակելու առաջարկին Ռ.Մովսեսյանը փաստեց, որ գիտության որոշ ուղղությունների համար շատ կարևոր է ֆիզիկական ներկայությունը քանի որ չեն կարող յուրացվել ինտերակտիվ կերպով:

**Թ.Վարդանյանը** նշեց որ հաճախումների 2 կրեդիտը հանելը ճիշտ էր: Եվ ուսանողների բացակայությունը կապեց դասախոսի պահանջկոտության հետ: Վ.Վարդանյանը բոլորին կոչ արեց մի փոքր անգիջում և պահանջկոտ լինել դրված հարցի լուծմանը հասնելու նպատակով:

**Ավետիսյան Համազասպը** փորձեց շտկում մտցնել թյուր ըմբռնման մեջ՝ 2 միավորը հատկացվում է ուսանողին դասապրոցեսին իր մասնակցության համար: Հ.Ավետիսյանը հասատեց այն փաստը, որ ուսանողների բացակայությունները ուղիղ կապված են դասախոսների դասապրոցեսի անհետաքրքիր վարելու հետ:

**Հունանյան Լեւզան** իր ելույթում նշեց, որ ուս.խորհրդի կողմից ուսանողների շրջանում ամեն ամիս հարցում է անցկացվում և դասերից բացակայելու ամենատատարածված կարծիքը անհետաքրքիր լինելն է: Լ.Հունանյանը նշեց նաև, որ 2 միավորների հանելը սխալ էր, քանի, որ դասի ստիպված եկած ուսանողը գոնե ականջի ծայրով մի բան ընկալած կլիներ:

**Գ.Ալեքսանյանն** ասաց, որ հարցն ավելի գլոբալ է և իրականում կրթության նկատմամբ մարդկանց պահանջներն են փոխվել: Նա նշեց նաև, որ նոր միջոցների և միջոցառումների ներդրումը կապահովի դասերի հաճախելիությունը: Ամբիոնի ջանքերով ներդրվել է ինֆորմացիայի ինտերակտիվ փոխանակման փորձ, որի միջոցով ֆիզիկական ներկայությունը չեն կարող ապահովել սակայն կարողանում են առցանց ապահովել մտավոր ներկայությունը: Եզրափակեց խոսքն այն մտքով, որ դասաժամերին ուսանողների ներկայությունն ապահովելու լավագույն գրավականը դասապրոցեսի հետաքրքիր լինելն է:

**Ն.Հարությունյանն** իր խոսքում նշեց, որ, գործ ունենք ուսանողների և “չուսանողների” հետ: Բացակայությունների երևույթը տարածված է միևնույն անձանց մոտ: Առաջարկեց խլացուցիչներ տեղադրել լսարաններում գրավոր քննությունների ընթացքում արտագրելու երևույթը բացառելու համար:

**Մ.Գրիգորյանը** - Ինչ պետք է անի դեկանը, որ ուսանողը ներկա լինի ձեր դասին: Իմ կարծիքով դասերին հաճախելու խնդիրն ավելի շատ դասախոսի խնդիրն է, իհարկե կան դեպքեր, երբ ուսանողն է անբարեխիղճ, անպարտաճանաչ՝ անկախ դասավանդման որակից: Միշտ չէ, որ ուսանողը սիրով է ընտրել իր մասնագիտությունը, միշտ չէ որ նա հույսեր է կապում իր հետագա մասնագիտական գործունեության հետ: Սրանք այն խնդիրներն են, որոնք առկա են մեր բոլոր բուհերում: Ուսանողը գալիս է դասի և հետաքրքրություն չի գտնում իր մասնագիտության մեջ: Մենք խնդիր ունենք մասնագիտությունը պահելու հարցում: Որքան էլ դժվար լինի մենք պետք է մասնագետ դառնալ ցանկացող ուսանողների հետ աշխատենք և հետաքրքիր դարձնենք ուսման գործընթացը, հավատ ներշնչենք իր ընտրած մասնագիտության հանդեպ,- ասաց Մ.Գրիգորյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Ընդունել ի գիտություն

**2. ԼՍԵՑԻՆ.** Սերվիսի ամբիոնի վարիչ Գոռ Փարսադանի Ալեքսանյանի հաշվետվությունը ամբիոնում կատարված աշխատանքների վերբերյալ: Գ.Ալեքսանյանը մանրամասնորեն ներկայացրեց ամբիոնում տարբեր ուղղություններով կատարված աշխատանքը: Ներկայացրեց նոր չափորոշիչներին համապատասխանեցված, թարմացված ուսումնական ծրագրերը ապա անդրադարձավ հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի ձեռքբերումներին, զարգացումներին և այն խնդիրներին, որոնք առավել կարևոր ու առաջնային են ամբիոնի զարգացման տեսակետից: Գ.Ալեքսանյանը ցավով նշեց ասպիրանտական մասնագիտական դասիչի չունենալու փաստը /հաշվետվությունը կցվում է/:

**ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑԻՆ.** **Թ.Վարդանյանը** անդրադարձավ մագիստրատուրայի դիպլոմում արձանագրված մասնագիտությանը «Սերվիս» թե «Զբոսաշրջություն»

**Մ.Գրիգորյան** - արդյոք ունենք բոլոր անհրաժեշտ պայմանները՝ ծրագրերը, «Հյուրանոցային գործ» մասնագիտությամբ ծրագրեր իրականացնելու:

**Ռ.Մովսեսյան** – Ձեր բաժնի որ տոկոսն է աշխատում ըստ մասնագիտության:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** *Թ.Վարդանյանն* իր խոսքում նշեց, որ «Սերվիսի» ամբիոնը ֆակուլտետի ամենածանրաբեռնված ամբիոնն է: - Ի պատիվ ամբիոնի դասախոսական անձնակազմի ջանքերի իրենք կարողանում են կոորդինացնել կրթական գործընթացը ինչպես նաև համագործակցել արտերկրի ԲՈւՀ-երի հետ: Այս ամենն աշխատասիրության շնորհիվ է,- ասած *Թ.Վարդանյանը*: Առաջարկեց ամբիոնի կատարած աշխատանքը գնահատել «բավարար»:

*Վ.Վարդանյանն* ասաց, որ ամբիոնը լուրջ գիտական և կրթական մեծածավալ աշխատանք է կատարել: Ունի ուսանողներին կրթելու և դաստիարակելու ծրագրերը: Ողջունեց «Սերվիս» մասնագիտության ասպիրանտական ծածկագիր ձեռք բերելու գաղափարը: Ամբիոնը ուս. տարում իր առջև դրված աշխատանքը կատարել է: Գտնում եմ կատարած աշխատանքը գնահատել բավարար:

*Մ.Գրիգորյան* - Ամբիոնի դասախոսական անձնակազմը ունակ է իր առջև դրված խնդիրները լուծելու, մեծ պոտենցիալ ունի: Բոլոր հարցերում դեկանատն ընդառաջելու, օգնելու է ամբիոնին իր առջև դրված խնդիրները լուծելու: Առաջարկում եմ կատարած աշխատանքը գնահատել բավարար,- ասաց Մ.Գրիգորյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվետու ժամանակաշրջանում «Սերվիսի» ամբիոնի վարիչ Գոռ Փարսադանի Ալեքսանյանի ամբիոնի կատարած աշխատանքը գնահատել «բավարար»:

**3. ԼՍԵՑԻՆ.** Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ Նարեկ Հարությունյանի հաղորդումը Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Արմինե Մնացականյանի և նույն ամբիոնի ասպիրանտ Անի Հակոբյանի ատեստավորման հարցի վերաբերյալ:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Արմինե Մնացականյանին և նույն ամբիոնի ասպիրանտ Անի Հակոբյանին ատեստավորել՝ ուսումը շարունակելու համար:

**3.1. ԼՍԵՑԻՆ.** Ֆիզ. աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի դոցենտ Ա.Գրիգորյանի հաղորդումը Ֆիզ. աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Սեդա Վարդանյանի, ասպիրանտ Արմենուհի Եղիազարյանի և ասպիրանտ Հասմիկ Քոչարյանի ատեստավորման հարցի վերաբերյալ:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Ֆիզ. աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Սեդա Վարդանյանի, ասպիրանտր Արմենուհի Եղիազարյանի և ասպիրանտ Հասմիկ Քոչարյանին ատեստավորել՝ ուսումը շարունակելու համար:

**3.2. ԼՍԵՑԻՆ.** Սերվիսի ամբիոնի վարիչ Գ.Փ.Ալեքսանյանի հաղորդումը հեռակա ուսուցման սերվիսի ամբիոնի ասպիրանտ Ամալյա Նավասարդյանի, ասպիրանտ Մարինե Մանուչարյանի և ասպիրանտ Շամամ Գևորգյանի ատեստավորման հարցի վերաբերյալ:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի սերվիսի ամբիոնի ասպիրանտ Ամալյա Նավասարդյանի, ասպիրանտ Մարինե Մանուչարյանի և ասպիրանտ Շամամ Գևորգյանին ատեստավորել՝ ուսումը շարունակելու համար:

**3.3. ԼՍԵՑԻՆ.** Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի վարիչ Ս.Հ.Հայրոյանի հաղորդումը հեռակա ուսուցման ասպիրանտ Արմինե Հակոբյանի և Սիփան Մանուկյանի ատեստավորման հարցի վերաբերյալ:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության

ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ **Արմինե Հակոբյանին** և Սիփան Մանուկյանին ատեստավորել՝ ուսումը շարունակելու համար:

**4. ԼՍԵՑԻՆ.** Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի նախագահ պրոֆ.Վ.Վարդանյանի հաղորդումը Սերվիսի ամբիոնի դասախոս ասիստենտ Հասմիկ Ռաֆիկի Սայադյանի դոցենտի կոչում ստանալու դիմումի վերաբերյալ՝ ուղղված ԵՊՀ ռեկտորին: Պրոֆ.Վ.Պ.Վարդանյանը նշեց, որ Հ.Ռ.Սայադյանի գիտամանկավարժական գործունեությունը, աշխատանքային ստաժն ու ներկայացված փաստաթղթերը բավարարում են ԵՊՀ-ում գործող կանոնակարգի պահանջներին՝ դոցենտի կոչում ստանալու համար: Մանդատային հանձնաժողովը որոշել է հարգել Հասմիկ Ռաֆիկի Սայադյանի դիմումը և միջնորդում է ֆակուլտետի գիտական խորհրդին դոցենտի կոչում շնորհելու համար:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Վ.Պ.Վարդանյանը բարձր գնահատեց Հ.Ռ.Սայադյանի գիտամանկավարժական գործունեությունը ֆակուլտետում: Հ.Ռ.Սայադյանի ցուցաբերել է ուսումնական աշխատանքի կազմակերպման բարձր մակարդակ և պրոֆեսիոնալիզմ:

Վ.Վարդանյանն առաջարկեց հարցը դնել փակ (գաղտնի) քվեարկության:

**Փակ (գաղտնի) քվեարկություն** անցկացնելու համար առաջարկվեց ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով. նախագահ՝ Թրահել Գերասիմի Վարդանյան, անդամներ՝ Սարգիս Սամվելի Քելյան, Աշխեն Հայկի Հովհաննիսյան:

**4.1 ԼՍԵՑԻՆ.** Հաշվիչ հանձնաժողովի նախագահ պրոֆ. Թրահել Գերասիմի Վարդանյան. հաղորդումը փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների վերաբերյալ: Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 38 անդամներից քվեարկության մասնակցել են 30-ը: Հասմիկ Ռաֆիկի Սայադյանի դոցենտի կոչում ստանալու համար կողմ են քվեարկել 29-ը, դեմ՝ 0, անվավեր՝ 1:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների վերաբերյալ և **Հասմիկ Ռաֆիկի Սայադյանին շնորհել դոցենտի կոչում:**

## 5. ԸՆԹԱՑԻՎ ՀԱՐՑԵՐ

**5.1 ՀՄԵՑԻՆ.** Սերվիսի ամբիոնի հայցորդ Մարինե Հայկի Փեթակյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերնագրի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** ամբիոնի վարիչ Գ.Ալեքսայնայը, Ս.Սուվարյանը: Առաջարկվեց ամբիոնի հայցորդ Մարինե Հայկի Փեթակյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Կայուն զբոսաշրջության զարգացման հնարավորությունները Գեղարքունիքի մարզում» վերնագիրը և գիտական ղեկավար հաստատել աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամայիս Ավագյանին:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Սերվիսի ամբիոնի հայցորդ Մարինե Հայկի Փեթակյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Կայուն զբոսաշրջության զարգացման հնարավորությունները Գեղարքունիքի մարզում» վերնագիրը և գիտական ղեկավար հաստատել աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամայիս Ավագյանին:

**5.2 ՀՄԵՑԻՆ.** Երկրաֆիզիկայի ամբիոնի ասիստենտ Մ.Մկրտչյանի կողմից ներկայացված «Երկրի ֆիզիկա դասընթացի գործնական և լաբորատոր աշխատանքների մեթոդական ձեռնարկ»-ը տպագրության երաշխավորելու հարցը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Որոշակի շտկումների և ուղղումներ կատարելու համար աշխատանքը վերադարձնել Երկրաֆիզիկայի ամբիոն, ուղղումներից հետո այն քննարկելու հիմնավորմամբ:

**5.3 ՀՄԵՑԻՆ.** Ռ.Ս.Մովսեսյանի հաղորդումը 2017-2018 ընթացքում «Կայուն զարգացման կենտրոնի» կողմից կատարած աշխատանքների վերաբերյալ:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** հաստատել 2017-2018 ընթացքում «Կայուն զարգացման կենտրոնի» կողմից կատարած աշխատանքների հաշվետվությունը:

**5.4 ԼՄԵՑԻՆ.** Երևանի պետական համալսարանի Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի դասախոս, գիտ.թեկնածու Ս.Ա.Սուջյանի «Արցախի հանրապետության տարաբնակեցման համակարգը» վերնագրով մենագրությունը տպագրության երաշխավորելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի մեթոդ.խորհրդի նախագահ պրոֆ.Թ.Գ.Վարդանյանը, դոցենտներ Ա.Հ.Պոտոսյանը և Գ.Գ.Ղամբարյանը, ովքեր կարծիք հայտնեցին գրքի գիտական և կիրառական նշանակության մասին:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Երևանի պետական համալսարանի Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի դասախոս, գիտ.թեկնածու Ս.Ա.Սուջյանի «Արցախի հանրապետության տարաբնակեցման համակարգը» վերնագրով մենագրությունը երաշխավորել տպագրության:

**Խորհրդի նախագահ**

**Մ.Ա.Գրիգորյան**

**Խորհրդի քարտուղար**

**Ե.Ս.Մանուկյան**